

սենէն, որը յոյն աշխարհագրագետի մօտ վարչական յատուկ անուանում էր չունի, իրականում Կասպիանէ-Կասպքի մի մասն է<sup>120</sup>։ Ուրեմն, Արաքսենէի դաշտն ընդգրկել է Միլի տափաստանը եւ Մուղանի դաշտի մի մասը։ Ստրաբոնի վերը բերուած տեղեկութիւնից երեւում է, որ սկզբում Ատրպատականի յիշատակութեամբ Երասխ-Արաքսը հեղինակը նոյնացնում է Կարմիր գետի հետ, յետոյ արդէն նկարագրում գետի հոսանքը հիւսիս-արեւմուտքից՝ նախ Ազարայի, որը, հաւանաբար, Արմաւիրն է, ապա Արտաշատի մօտով։ Ստրաբոնը<sup>121</sup> Ատրպատականի սահմանների մօտ՝ Արաքսի ձախ ափին, Նորաշէնի եւ Նախիջեւանի միջեւ, տեղադրում է Արքաստա-Արք(ա-յա)շատ քաղաքը<sup>122</sup>։ Արտաշատի մասին յիշատակութիւնը բացառում է Հայաստանի սահմանակցութիւնը Ատրպատականին Արաքս գետի հարաւային ափին, քանի որ Արտաշէս Ա.-ից սկսած Արաքսի աջափնեակը Մեծ Հայքի թագաւորութեան մէջ էր։ Տեղեկութիւններից մէկում, նոյնպէս, կապուած Անտոնիոսի պարթեական արշաւանքի հետ, Ստրաբոնը Արաքս գետը համարում է սահմանագիծ Հայաստանի եւ Ատրոպատենէի միջեւ<sup>123</sup>։ Այս տեղեկութիւնը համադրելով Պլուտարքոսի նոյն դէպքերին վերաբերող հաղորդումների հետ՝ ցոյց ենք տուել, որ Արտաշէս Ա.-ի կողմից Մեծ Հայքի թագաւորութեանը

միացումը Փաւենէ<sup>124</sup> Փաւենիտիս երկրամասը համապատասխանում էր արքունական տիրոյթ Մարդպետականին (Արեւելեան Վասպուրականին), որը հայկական աղբիւրներում յայտնի էր Մարաց ամուր աշխարհ անունով<sup>125</sup>։ Այս Մարաց ամուր աշխարհն էլ Ստրաբոնի մօտ կոչւում է Ատրոպատենէ, որը Ստրաբոնի համար Մարաստանի մի մասն էր<sup>126</sup>։

Այսպիսով, հին աղբիւրների համակողմանի քննութեամբ փորձեցինք նոր լոյսով անդրադառնալ Ատրպատականի եւ Մեծ Մարաստանի պատմական աշխարհագրութեան եւ էթնիկական կազմի որոշ հարցերին, որոնցից մի քանիսի պարզաբանումը կարեւոր նշանակութիւն ունի նաեւ Հայաստանի հին պատմութեան ուսումնասիրութեան համար։ Սկզբնաղբիւրների քննութիւնը ցոյց է տալիս, որ թէ՛ Ատրպատականում, թէ՛ Մեծ Մարաստանում կատարուած վարչաքաղաքական վերածելումներն ու տարածքային փոփոխութիւնները տեղի են ունեցել իրանական էթնիկական տարրի հենքի վրայ։

120 Նոյն տեղում, էջ 264-265։

121 Страбон, с. 498.

122 Ֆ. Տէր-Մարտիրոսով, Արեւի յունարէն արձագանքները, ՊԲՀ, 1989, թիւ 1, էջ 185. Լ. Կարագեօզեան, Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ յարակից անհանգանքում), Եր., 1998, էջ 128-129. Բ. Լ. Յարութեան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի եւ այլ աղբիւրների, քարտեզ, Երեւան, 2001։ Արքաստա տեղանունը Ա. Յակոբեանը վերակազմում է Մարաշատ՝ անհանգանքով Մարաւան-Մարակերտին (տե՛ս Ա. Յակոբեան, Պատմաաշխարհագրական եւ վիճակագրագիտական ուսումնասիրություններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Եր., 2009, էջ 231-232, 414)։

123 Ստրաբոն, էջ 47։

124 Փաւենէն Անուանուել է Մեծ Հայքի Բուստի-Փաւենէ գաւառի հետ։ Վերջինիս հետ, թերեւս, կապուած է Օբարեմէն, որը, սովորաբար, համարում է Գոգարեմէ անուան վրիպակ (տե՛ս Ա. Յակոբեան, ԳՁ. աշխ., էջ 403, 406)։

125 Յ. Խորիկեան, Անտոնիոսի պարթեական արշաւանքի հետ կապուած մի հարցի շուրջ. «Մերձատր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», հտ. XXVII, Եր., 2009, էջ 28-35

126 Ստրաբոն, էջ 43։

## ԺՈՂՈՎՐԴԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Նարինե Դիւբարեան

Տեղանունների գործածութիւնը պարզ լեզուական հաղորդակցութիւնից դուրս յաճախ պահանջում է աշխարհագրական տարբեր միաւորների անուանումների իմաստային բովանդակութեան բացայայտում։ Տեղանուն իմաստի վերականգնումն առաջնային խնդիր է դառնում ե՛ւ պատմագիտութեան համար, ե՛ւ աշխարհագրութեան. այս գիտակարգերի տեսանկիւնից տեղանուններն արդէն դադարում են տարածութեան եւ ժամանակի մէջ կողմնորոշուելու համար ստեղծուած սոսկ նշաններ լինելուց, այլ վերածւում են ժողովուրդների բնակութեան սկզբնական վայրերի, երկրի տարածքի նախնական աշխարհագրական վիճակի մասին կարեւորագոյն տեղեկատուութիւն պարունակող աղբիւրների։ Տեղանունագիտութեան մէջ իբրեւ հիմնական տեղանունահիմքեր, որպէս հիմնական ընդունուած է առանձնացնել աշխարհագրական միաւորների անուանումները, բուսանունները, կենդանանունները, անձնանունները։ Սակայն տարբեր ազգերի տեղանունական համակարգերի քննութիւնն ակնյայտ է դարձնում, որ իբրեւ այդպիսին պէտք է գնահատել նաեւ ժողովրդանունները։

Տեղանունների կազմում ժողովրդանունների կիրառութեան հանդէպ գիտական հետաքրքրութիւնը եղել է մշտապէս։ Տեղանունագիտութեան մէջ այս հիմքերից ածանցուած կառույցներն ունեն յատուկ եզրոյթներ՝ էթնոտեղանուններ եւ գեոնոնիմներ։ Ընդունուած սահմանումը հետեւեալն է. էթնոտեղանունն այնպիսի աշխարհագրական անուանում է, որի հիմքում որեւէ էթնոսի, ժողովրդի, ցեղի կամ առաւել փոքր միաւորման՝ տոհմի ճիւղաւորման

անունն է։ Վերջին տիպի տեղանունները յատկանուանագէտ Ա. Սուպերանսկայան կոչում է գեոնոնիմ՝ էթնիկական հանրոյթների ստորին միաւորների անուններից ածանցուած լինելու հիմքով. դրանք ոչ թէ էթնոսի, այլ գեոնի՝ զարմի անունից ծագած տեղանուններ են։ Պատմաբանները եւ աշխարհագրագէտները նման տեղանունահիմքերը դիտարկում են որպէս տուեալ տարածքում այս կամ այն ազգի նախնական բնակութեան կամ ժողովուրդների գաղթի տուեալ ճանապարհի զօրեղ ապացոյց։ Բայց մինչ ժողովրդանունների տեղանունական գործառոյթների ուսումնասիրութիւնը, պէտք է յստակեցնել «ժողովրդանուն» հասկացութիւնը։ Յայտնի ռուս տեղանունագէտ Ե. Պոսպելովն այս առումով նշում է, որ անցեալի եւ ներկայի գիտական գրականութեան մէջ առկայ է «ժողովրդանուն» հասկացութեան պարզունակեցում։ Ըստ առաջին մօտեցման՝ ժողովրդանուն տեղանունահիմք է համարում անուանման մէջ հանդիպող ցանկացած բառ, որ այս կամ այն կերպ առնչւում է ցեղերի, ժողովուրդների եւ ազգերի անուններին<sup>1</sup>։ Նման մօտեցումը կարող է յանգեցնել տեղանունների ստուգաբանութեան լուրջ սխալների, որովհետեւ ժողովրդանուններն ի սկզբանէ՝ մինչ տեղանուն դառնալն, առաւել դիւրին վերածւում են անձնանունների, ցեղանունների, տոհմանունների, վերջիններս էլ՝ ազգանունների, ուստի տեղանունների մէջ ժողովրդանուն տեսնելուց առաջ պէտք է փորձել պարզել, թէ որն է սկզբնաձեւը, այսինքն՝ բուն ժո-

1 Տե՛ս E. M. Пospelов, Этнонимы в топонимике. «Этническая топонимика» дондվածոյ, Москва, 1987, էջ 5-6։

ղոժրդանունն է դարձել տեղանուն, թէ նրանից ծագած անձնանունը: Անուանադրման բանաձևում ուրոյն դիրք ունի դիւցազնանունը (էպոնիմ), այսկերպ կոչում են այն իրական կամ առասպելական անձին կամ հերոսին՝ դիւցազնին, ի պատիւ որի կոչուել է որեւէ աշխարհագրական միաւոր՝ երկիր, լեռ, ծով, գետ եւ այլն, ինչպէս նաեւ ժողովուրդ, ցեղ կամ ժամանակային հատուած:

Այսպէս՝ Հայկը, Արմէնը, Գեղամը եւ նման այլ անձնանունները դարձել են դիւցազնանուն-էպոնիմ, որից յետոյ կամ միաժամանակ վերածուել տեղանուն:

Օրինաչափ ծագումնաբանական շղթան հետեւեալն է՝ ժողովրդանուն>տեղանուն, բայց երբեմն հնարաւոր է միջնորդաւորուած անցում՝ ժողովրդանուն>անձնանուն>տեղանուն: Վերջին դէպքում տեղանունահիմքն արդէն անձնանունն է եւ ոչ թէ ժողովրդանունը, այլ կերպ ասած, հերոսն անձն է, ոչ թէ էթնոսը: Ուստի անիմաստ է տուեալ ժողովրդի հնագոյն հետքերը փնտրել թէկուզ եւ նրանից ծագած անձնանունամբ կոչուած վայրերում. չէ՞ որ անձնանունները տեղանուն, յատկապէս՝ բնականուն դառնալու մեծ ներուժ ունեն. հին շրջանում թագաւորների եւ իշխանների, հերոսների անուններով կոչուած էին ոչ միայն նրանց պատկանող, նրանց կողմից կառուցուած կամ գրաւուած քաղաքներն ու աւանները, այլեւ նրանց ընծայուած բնակավայրերը, անգամ այն վայրերը, որտեղ տարածուած էր նրանց փառքն ու հռչակը՝ պաշտամունք դարձած:

Ռուսական տեղանունագիտութեան մէջ մեծ բանավէճեր են ծաւալուել, այսպէս կոչուած, «կեղծ ժողովրդանունների» վերաբերեալ (псевдоэтнонимы), օրինակ՝ կոցառ արմատը, որը տարածուած տեղանունահիմք է, արդեօք կապ ունի՞ խազարների հետ, թէ՞ կոցա-գորգ բառից է ծագում, այսինքն՝ կոցառ նշանակում է գոր-

գագործ, ոչ թէ խազար, կամ արդեօք բոլոր թաթար բառով կազմուած տեղանունները ծագում են թաթար ժողովրդանունից, թէ՞ դրանց մի մասը թաթար արմատից կազմուած անձնանուններից, ազգանուններից կամ մականուններից է առաջացել<sup>2</sup>:

Հազարամեակների եւ անգամ դարերի հեռուից այս իրողութիւնը պարզելը որոշ դէպքերում գրեթէ անհնար է լինում՝ հաւի եւ ձուի առաջնութեան վերաբերեալ հանրայտ առեղծուածի օրինակով: Պատմագիտութեան եւ լեզուաբանութեան մէջ կայ նաեւ այն տեսակէտը, ըստ որի՝ ժողովրդանունները ծագում են անձնանուններից. այսինքն՝ պատմական որոշակի իրադարձութիւններից յետոյ (ազգական յաղթանակներ, տնտեսական-մշակութային նուաճումներ) տոհմի նահապետի անունով սկսում է կոչուել նրա ողջ զարմը: Մեր պատմագրութեան հայր Մովսէս Խորենացին իր Հայոց պատմութիւնը սկսում է հէնց այս սկզբունքներին հաւատարիմ եւ մեր ինքնանունումը, որպէս ազգային միաւոր՝ հայ, ինչպէս նաեւ այլ ազգերի կողմից մեզ տրուող անուանումները՝ արմէն, թորգոմեան, սաքանազեան եւ այլն, բացատրում մեկնաբանում է մեր ազգի հերոս նախնիների անձնանունների միջոցով: Խորենացին ոչ միայն մեր ժողովրդանունների ծագումն է կապում դիւցազնանունների հետ, այլեւ նշանաւոր բոլոր տեղանունները բխեցնում է Հայկեան զարմի ժառանգների անուններից<sup>3</sup>:

Քերթողահայր Խորենացուց յետոյ դարեր են անցել, սակայն տեղանունագիտութեան մէջ դեռեւս քննութեան խնդիր է, օրինակ, Արմաւիր կամ Արմաշ, Արմա, Հարմա տեղանունները ծագում են մեր էթնիկական արմէն անուանումից, որը ստուգաբանում է որպէս «արմ-արմատ,

2 Հմմտ. Е. М. Поспелов, *Աշխ.*, էջ 5-6:  
3 Տե՛ս Մովսէս Խորենացի, *Հայոց պատմութիւն*, Երեւան, 1981, էջ 48-52:

ցեղ, զարմ» կամ «ընձիւղ, ցողուն», «մեծ, ուժեղ, հզօր»<sup>4</sup>, թէ մեր նախահայր Արմէնի անձնանունից, որը մեծ հաւանականութեամբ կարող է առաջացած լինել հէնց վերոյիշեալ հասարակ գոյականներից, քանզի դրանք կարող էին լինել անուանադրման դէպքում անհրաժեշտ անձի բնութագրիչ-տարբերակիչ մականուններ:

Հայ տեղանունագիտութեան մէջ Նիկողայոս Աղոնցը, ապա Գրիգոր Ղափանցեանը տեղանունների եւ տեղանունակերտ հիմքերի կամ մասնիկների քննութեանը նուիրուած աշխատանքներում, իբրեւ կանոն, հնագոյն տեղանունների հիմքում տեսնում են ժողովրդանուններ կամ ցեղանուններ՝ դրանց առաջացումը կապելով ժողովուրդների գաղթ-տեղաշարժերի հետ<sup>5</sup>: Մասնաւորապէս «Հին Հայաստանի տեղանունների պատմալեզուաբանական նշանակութիւնը» աշխատութեան մէջ Գր. Ղափանցեանն անդրադառնում է հայ նախարարական մի շարք տոհմանունների, որոնցից ծագում են բազմաթիւ բնականուններ եւ երկրանուններ՝ դրանք ստուգաբանելով որպէս խեթական ցեղերի հնագոյն անուանումներ: Նման ստուգաբանութիւնների որոշ մասն այսօր վիճարկուած է, սակայն ընդհանուր կադապարն իր կենսունակութիւնը պահպանում է ցայսօր, այսինքն՝ հայկական էթնոսի մէջ ձուլուող այլ ցեղային միաւորների անուանումները սկզբնապէս վերածուել են տոհմանունների, ապա՝ բնականունների, որովհետեւ այդ տոհմերը սեփականատէրն ու աւատն էին որոշակի տարածքային միաւորների՝ գաւառների կամ աշխարհների: Գր. Ղափանցեանն ուրուագծում է տոհմացեղային

գաղթի մի ողջ պատկեր Արածանիի հովտի ուղղութեամբ տարբեր սեպագիր աղբիւրների հիման վրայ<sup>6</sup>. Սիւնի, Պալա/Բալա/Պաղա/Բաղա, Սիս, Շակ/ք, Տաւր նայիրեան ցեղերի, որոնց անուններից առաջացել են Սիւնիք, Ղարաբաղ, Սիսական-Սիսիան, Շակաչէն, Տարօն, Տուրուբերան (Tauribirani) եւ նոյնարմատ այլ տեղանունները: Այսպիսով, հայկականացումը տարբեր ցեղերի, որ Ղափանցեանը կոչում է արմենականացում, սկսուել է Փոքր Հայքից (Haiaasa), յետոյ ընդգրկել Տարօնը՝ Դիարբեքի ռեզուլտութեամբ, այնուհետեւ Վանայ լճի շրջակայքը՝ Արածանիի հիւսիսային հոսանքով դեպի Բասեն, այնտեղից արեւմուտք՝ Սպեր, այնուհետեւ հիւսիս՝ դէպի Այրարատ. «Բազմաթիւ նախահայկական ցեղեր, ե՛ւ տոհմեր կամ անհետ վերացել են, կամ էլ աւանդել են իրենց անունները աշխարհագրական տարածքներին եւ վայրերին, ինչպէս նաեւ իշխանական եւ նախարարական տոհմերին»<sup>7</sup>: Ընդ որում, ժողովրդանուն տեղանունակերտ հիմքով կազմուած են ոչ միայն երկրանուններ կամ բնականուններ, այլեւ Ֆիզիկաաշխարհագրական միաւորների անուններ՝ ջրանուններ, լեռնանուններ. վերջիններս յաճախ հնութեան աւելի մեծ աստիճան են բացայայտում: Գր. Ղափանցեանի՝ բերուած դատողութիւնները տեղանուն-տոհմանունների նոյնականութեան կամ միմեանցից ծագած լինելու վերաբերեալ առաւել խորացրել եւ հիմնաւորել են յետագայում ե՛ւ պատմաբանները, ե՛ւ լեզուաբանները, ինչպէս հայ, այնպէս էլ այլազգի՝ Զ. Գրեպին, Ի. Դեակոնով, Վ. Բենեցիանու, Ս. Երեմեան, Ն. Յարութիւնեան, Գ. Զահուկեան:

4 Գ. Զահուկեան, *Հայոց լեզուի պատմութիւն*. Նախագրային շրջան, Երեւան, 1987, էջ 287-288:  
5 Տե՛ս Գր. Капанцян, *Суффиксы и суффиксированные элементы в топонимике древней Малой Азии*, Ереван, 1948. Գր. Ղափանցեան, *Անտիկ գործեր* / Восточная Малая Азия – генетический исток армянского Ара, Երեւան, 2008:

6 Գր. Капанцян, *Историко-лингвистическое значение топонимики древней Армении*, Ереван, 1940, էջ 73-74:  
7 Նոյն տեղում, էջ 75:

ժողովրդանունների տեղանունական կիրառությունների վերլուծությունը տարբեր ազգերի տեղանունական համակարգերում երեւան է բերում դրանց սերտ կապն այնպիսի պատմաաշխարհագրական իրողությունների հետ, ինչպիսիք են էթնոսի բնակեցման եւ սփռման ձեւը, տուեալ տարածքում առկայ էթնիկական շփումների տիպը, հողի սեփականություն եւ հողօգտագործման ձեւերը, տնտեսական գործունէությունների իւրաքանչիւր իրապատկերները: Էթնոտեղանունների առաջացումը վաղ հնագրարի հետ է կապուած եւ հետեւանքն էր հողի սեփականություն եւ օգտագործման համայնքային՝ տոհմացեղային յարաբերությունների: Դրանք այն ժամանակներն էին, երբ տեղանքը կոչւում էր այն բնակեցնող ցեղի ընդհանուր անունով: Անուանակոչման այս սկզբունքի տարածուածություն եւ համընդհանուր բնոյթի մասին վկայում են հնագոյն քարտեզները՝ սկսած Պտղոմէոսի ժամանակներից, ինչպէս նաեւ՝ տարբեր ժողովուրդների հնագոյն մատենագրությունները կամ դանազան արձանագրությունները, որտեղ յիշատակուած էին ռազմական գործողությունների հետեւանքով նուաճուած տարածքներն ու ազգերը: Մովսէս Խորենացին, այսպիսով, հետեւում էր լուի այս աւանդոյթին, համաձայն որի՝ երկրի անուանումը պէտք է բխի նրա ցեղանուն-տոհմանունից, վերջինս էլ ցեղի առաջատար հերոսների անուանումներից: Տարածքների եւ ժողովուրդների անունների ոչ տարբերակուածութեան օրինակներ կարելի է գտնել գրեթէ ամենուրեք, այսպէս՝ Ռոս (Русь) անուանումը թէ՛ ռուսական, թէ՛ օտար աղբիւրներում կիրառուած է եւ որպէս երկրանուն, եւ որպէս ժողովրդանուն, ինչը բնաւ դիւրին չի դարձնում այս արմատի ստուգաբանությունը՝ բառային նշանակութեան բացայայտման առումով<sup>8</sup>: Նոյն բնոյթի են

իրան, Էլլադա, Լիտուա, Բրետոն, Եորք, Կորելա, Պերմ, Իւզրա, Պերու, Չիլի եւ այլ հազարաւոր անուանումները, որոնք սփռուած են բոլոր մայրցամաքներում: Ե. Պոսպելովը ներկայացնում է վիճակագրական տուեալներ նման երկրա-ժողովրդանունների տարածուածութեան վերաբերեալ. ըստ այդմ՝ դրանց քանակն առաւել մեծ է Եւրոպայի տարածքում՝ 50%, Ասիայում՝ 30%, Աֆրիկայում՝ 20%, իսկ ԱՄՆ-ում, որտեղ պետական-քաղաքական սահմաններն առաւել ուշ են ձեւաւորուել, դրանց տեսակարար կշիռը 10%-ից էլ ցածր է: Եթե նախկին ԽՍՀՄ տարածքի բոլոր հանրապետությունների, ինքնավար կազմաւորումների անունները բաղադրուած են բնիկ ժողովուրդների անուանումներից, ապա ԱՄՆ-ում նման ծագում ունեն միայն մի քանի նահանգների անուանումները՝ Իւտա, Դակոտա, Տեխաս եւ այլն:

Այն բնակավայրերը, որոնք տոհմական տարածքների կենտրոնն էին, ժամանակի ընթացքում յաճախ վերածուած էին քաղաք-նստանների՝ ժողովրդանուն հիմքով: Պատճառն ինքնին հասկանալի է. նման բնակավայրերի ազգային կազմը միատարր էր, ինչը տարբերակիչ լաւագոյն յատկանիշն էր դառնում անուանադրման համար: Նման կազմությունների հանրայն օրինակներ են Վենետիկ, Դրեզդեն, Լոնդոն, Փարիզ քաղաքանունները:

Ինչպէս վերը նշեցինք, ժողովրդանունները մասնակցում են ոչ միայն երկրանունների, այլեւ գրեթէ բոլոր ֆիզիկաաշխարհագրական միաւորների անուանումների կազմութեանը՝ ծովերի, կղզիների, թերակղզիների, ծովածոցերի եւ այլն: Օրինակ՝ Կասպից ծովի, Էրի եւ Հուրոն լճերի (ԱՄՆ), Պարսից ծոցի (որն, ի դէպ, կոչւում է նաեւ Արաբական), Բոսֆոր-Դարդանելի նեղուցի, Սիցիլիա կղզու անուանումները բաղադրուած են ժողովրդանուններից:

8 E. M. Пoспeлoв, a2. աշխ., էջ 6:

Տարբեր ցեղերով բնակեցուած տարածքներում էթնոտեղանունների առաջացումը բացատրուած է ցեղային պատկանելութեան յատկանիշի տարբերակիչ մեծ դերով: Արէալային քննությունը ցոյց է տալիս, որ էթնոտեղանունները տարածուած են անհասարաչափ, դրանք առաւել յաճախադէպ լինում եւ պահպանուած են էթնիկական շփումների կենտրոնում, այսինքն՝ ազգամիջեան խաչմերուկներում: Բացարձակ միատարր ազգային բնակություն վայրերում էթնոտեղանուններ սովորաբար չեն առաջանում, իսկ եթէ առաջանում են, երկար չեն պահպանուած, որովհետեւ այսպիսի տեղերում ազգային պատկանելությունն արդէն բաւարար տարբերակիչ յատկանիշ չէ: Ընդ որում էթնոտեղանունները յաճախ ծագում են բնիկ, հնագոյն բնակչութեան եւ եկուորների յարաբերությունների զարգացման արդիւնքում, դրանք հիմնականում նուաճող-նուաճուող բնոյթի են. բնիկներին գալիս են տիրելու, ձուլելու նոր, առաւել երիտասարդ, զարգացած կամ մարտունակ ցեղերը, իսկ նուաճողների կամ ձուլուողների անուանումները երբեմն մնում են որպէս տուեալ տարածքի անհետացած հնաբնակների գոյութեան եզակի ապացոյցներ: Այսպէս, Ն. Աղոնցը, քննելով Ներքին Հայքի գաւառանունների (Խորձեան/է, Պաղնատուն, Մունձուր, Դարանաղ, Եկելէս/էն, Աղիւն, Մանաղին, Դերջան, Կարին, Շաղգոմ, Սպեր) եւ նրանցից ածանցուած բնականունների ու գետանունների ծագումնաբանությունը տարբեր աղբիւրներում, գրում է. «Շաղգոմից բացի մնացած անունները նախահայկական ծագում ունեն: Այդ գաւառները, որ հայերը իւրեցին հարեւան ցեղերից, պահպանեցին իրենց անունները, որոնցից շատերը գուտ ազգաբարկան տերմիններ են: Անուանումների, ինչպէս նաեւ տեղագրութեան խնդ-

րում դասական հեղինակները համաձայն են հայկական աղբիւրներին»<sup>9</sup>: Բայց սա յարաբերությունների միակ բնոյթը չէ, որ հնարաւոր է դարձնում էթնոտեղանունների առաջացումը. դրանք կարող են ծագել նաեւ խաղաղ գոյակցութեան եւ համակցութեան տարածքներում: Այս դէպքում սկսեալ հնագոյն ժամանակներից մինչեւ այսօր ստեղծուած են տեղանունական շարքեր, որտեղ տարբերակիչ մակդիրը սեռականաձեւ ժողովրդանուն է.

Աղուանք-Հայոց Աղուանք, Ատրպատական-Հայոց Ատրպատական, Տաւրոս-Հայկական Տաւրոս, Միջագետք-Հայկական Միջագետք-Ասորական Միջագետք, Դուին Հայի-Դուին Հայկական-Դուին Քրդական-Դուին Այսոր-Դուին Այսորի-Դուին Ասորական-Դուին Ասորի, Ասորու, Ռուսական Ախտա-Հայի Ախտա, Ռուսական(Ռուս) Գերգեր (Գեառգեառ)-Հայկական Գերգեր (Գեառգեառ), Հայոց Հրազդան-Հրազդան, Ռուս Բորիսի (Պարիս Ռուսաց)-Հայկական Բորիսներ, Քրդայ գոմեր-Բոչանց գոմեր-Լեզգու գոմեր: Նման անուանաշարքեր առաջանում են խառն անուանաշարքեր առաջանում են խառն տեղանունական համակարգերում. համեմատենք՝ Ռուսաստանում առկայ Մորդովական Պիչլեա-Թաթարական Պիչլեա, Ռուսական Ակաշեո-Թաթարական Ակաշեո, Մարիական Սարամալ-Ռուսական Սարամալ-Ուզմուրտական Սարամալ եւ այլն:

Որսորդ եւ ձկնորս ցեղերի տարածումն ուղղակի պատճառ է դառնում, որ տարածքի ոչ միայն բնականունները, այլեւ գետերն ու լճերը, անտառները, լեռներն ու ձորերը բաղադրուեն ժողովրդանուններից: Քոչուոր-անասնապահ ցեղերի անունները եւս տեղանունահիմք դառնալու մեծ ներուժ ունեն, որովհետեւ անուանակոչման միջոցով քոչուոր ցեղերը

9 Նիկողայոս Աղոնց, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 66:

իւրովի ամրակայում էին իրենց սեփականութեան իրաւունքը տուեալ տարածքների հանդէպ: Թուրք-թաթարական տարբեր ցեղանունների առկայութիւնը Ռուսաստանի տարածքում ուղղակի երեւան է բերում նրանց գաղթի ճանապարհը: Բնակչութեան բոլոր տիպի տեղաշարժերը՝ խաղաղ կամ ռազմական, իրենց հետքը թողնում են տեղանունների մէջ: Հայկական Կիլիկիա, Հայկական կամ Հայոց ծով, Հայոց ծոց. այս անուններն ուղղակի վկայութիւնն են Միջերկրական ծովի փոփոխումների վերահաստատման փորձերի, որոնք մեր պատմաառասպելական ծովից ծով Հայաստանի տեսլականի յանկարծագիւտ առարկայացումներից էին նոր պետականութեամբ, նոր գրական լեզուով, մշակոյթով եւ գիտութեամբ:

Պէտք է նկատի ունենալ, որ նուաճող ժողովուրդները, տիրելով որոշակի տարածքների, կարող են ե՛լ պահպանել բնիկ ժողովուրդների անուանումները որպէս տեղանունահիմքեր, ե՛լ ջնջել՝ դրանք փոխարինելով իրենց ժողովրդանուններով: Ժողովուրդների եւ լեզուների փոխարեքութիւններն ու փոխազդեցութիւնները ընդհանուր լեզուաբանութեան մէջ ընդունուած է տարանջատել 2 տեսակի՝ փոխներթափանցում (ինտերֆերենցիա) եւ փոխառութիւն<sup>10</sup>: Տեղանունների քննութեան առումով յատկապէս կարեւոր է փոխներթափանցման երեւոյթների բացայայտումը: Փոխներթափանցումը լեզուների առաւել խորքային փոխազդեցութիւնն է, որն առաջանում է երկլեզուութեան կամ բազ-

մալեզուութեան հետեւանքով եւ անպայմանօրէն ուղեկցւում է էթնիկական փոխազդեցութեամբ: Փոխներթափանցումն ունի երկու պատճառ՝ քաղաքական նուաճումը եւ մերձաւոր հարեւանութիւնը կամ համակեցութիւնը: Փոխներթափանցման դրսեւորումներից է խաչաւորումն իր երեք ենթատեսակներով՝ մակաշերտ (սուպերստրատ), առշերտ (ադստրատ) եւ ենթաշերտ (սուբստրատ): Մակաշերտը եկուորների, ի մասնաւորի՝ նուաճողների լեզուի ազդեցութիւնն է տեղացիների լեզուի վրայ. այս դէպքում եւս տեղանունների իւրօրինակ փոխանակում է կատարւում, ինչպէս օրինակ՝ հայ-թուրքական լեզուական փոխազդեցութիւնների պարագայում: Մակաշերտային տեղանունները, որպէս կանոն, չեն մերում տուեալ լեզուի տեղանունական համակարգում, գիտակցում են իբրեւ օտար եւ քաղաքական իրավիճակի փոփոխութիւնների պարագայում հետեւողականօրէն դուրս են մղւում: Այդպէս եղաւ Հայաստանի պետական ինքնուրոյնութեան գրեթէ ողջ ժամանակահատուածում՝ ներառեալ խորհրդային շրջանը, երբ օտարամուտ թուրքական տեղանունները փոխարինուեցին իրենց հնագոյն սկզբնաձեւերով կամ այդ պահին պատեհ թուացող այլ անուններով, բառապատճենումներով եւ այլն:

Առշերտը հարեւան լեզուներից մէկի ազդեցութիւնն է միւսի վրայ խառը բնակութեան վայրերում: Նման տեղանուններ մեզանում առաջացել են բոլոր ժամանակներում թէ՛ պարսկերէնի, թէ՛ ադրբեջաներէնի, թէ՛ ռուսերէնի ազդեցութեամբ, սակայն դրանք դիպուածային բնույթ են կրում: Մեր քննութեան առարկայ նիւթի տեսանկիւնից շատ աւելի հետաքրքիր է ենթաշերտի ըմբռնումը: Ենթաշերտը տեղաբնակների լեզուի ազդեցութիւնն է եկուորների, ի մասնաւորի՝ նուաճողների լեզուի վրայ. շատ էթնոտեղանուններ բացատրւում են հէնց ենթաշերտի միջոցով:

\* Հայոց ծով, Հայոց ծոց տեղանունը (Այսաի կամ Իսիկեան ծոց Միջերկրական ծովի Ռիախ-արեւելքում) յիշատակում է Դ. դարից սկսած: Կիլիկեան Հայոց պետականութեան ժամանակներում այն առաւել մեծ գործածութիւն է գտնում: Միջնադարեան երոստական Ռեդիմակները եւ ադրբեջանը Հայկական ծոցը եւ Հայկական Կիլիկիայի ողջ ծովային շրջակայքը կոչել են Հայկական ծով, իսկ ծովափը՝ Հայկական ծովափ:

10 Տե՛ս Գ. Ջաֆուկեան, ԱԶ. աշխ., էջ 12:

Այդ իսկ պատճառով էլ ընդհանուր ենթաշերտի մէջ առանձնացւում է տեղանունական ենթաշերտը:

Տեղանունազետ Ռ. Ագեեւան այս կապակցութեամբ գրում է. «Սուբստրատ եզրոյթի կիրառութիւնը տեղանունագիտութեան մէջ ունի խիստ պարագմատիկ բնոյթ: Մինչ այժմ բաւարար մշակուած չեն ենթաշերտային տեղանունագիտութեան տեսական խնդիրները, որոնց թուում են, ըստ իս, հետեւեալները. 1) տեղանունական ենթաշերտ հասկացութիւնը, ենթաշերտը լեզուի մէջ եւ տեղանուններում, 2) ենթաշերտային տեղանունների առանձնացման սկզբունքները, 3) ենթաշերտային տեղանունների ուսումնասիրութեան մեթոդները, 4) տուեալ տարածքի տեղանունական համակարգը եւ ենթաշերտային տեղանունները, 5) ենթաշերտային տեղանունների տարբերակները, 6) ենթաշերտային տեղանունների բնութագրումը՝ ըստ ծագումնաբանութեան»<sup>11</sup>: Ռ. Ագեեւան յատկապէս կարեւորել է այս հիմնախնդիրներից առաջինը՝ ենթաշերտի տեղանունական ըմբռնումը: Ենթաշերտ ասելով՝ ընդհանուր լեզուաբանութեան մէջ նկատի ունեն լեզուի այն շերտը, որը ծագել է նախորդ՝ «պարտուած» լեզուի ազդեցութեամբ, այլ կերպ ասած, սուբստրատը պարտուած լեզուի հետքերն են «յաղթած» լեզուի մէջ:

Տեղանունագիտական գրականութեան մէջ ենթաշերտը մի փոքր աւելի լայն ըմբռնում ունի. «Տեղանունագիտութեան մէջ ենթաշերտ ասելով յաճախ նկատի ունեն տուեալ տարածքի այն բոլոր բնակիչների տեղանունների լեզուն, որոնք ժամանակային առումով նախորդում են այժմ այդ տարածքում գերակշռող բնակիչներին՝ անկախ այս կամ այն բնակչու-

թեան լեզուների մերձաւոր ցեղակցային բնոյթից»<sup>12</sup>: Այսինքն՝ ցեղակից ժողովուրդների կամ ազգերի տեղանունական փոխներթափանցումները եւս համարւում են ենթաշերտային, այն դէպքում, երբ լեզուաբանութեան մէջ անհնար է խօսել ենթաշերտի մասին, երբ խօսքը վերաբերում է մերձաւոր ցեղակից լեզուներին:

Ուշագրաւ է այս տեսանկիւնից «ենթաշերտային տեղանուն» եւ «մակաշերտային տեղանուն» հասկացութիւնների ներմուծումը, որ կատարել է Ա. Դուլզոնը Սիբիրի տարածքի տեղանուններն ուսումնասիրելիս, եւ զարգացրել է Ռ. Ագեեւան: Վերջինս նշում է. «Որեւէ տարածքի, ուր հնարաւոր է ենթաշերտ, ուսուական տեղանունների վերլուծութեան ժամանակ պէտք է տարբերել ծագումով ռուսական եւ կիրառել տարբերակումը կիրառելի է ցանկացած վայրի եւ ցանկացած լեզուի տեղանունների հանդէպ, որտեղ հնարաւոր են ենթաշերտային երեւոյթներ: Այս պարագայում խնդիրը յանգում է տեղանունների տարժամանակեայ եւ համաժամանակեայ քննութեանը, որովհետեւ համաժամանակեայ քննութեան տեսանկիւնից անհնար է խօսել ենթաշերտի մասին: Մեր համոզմամբ, դեռեւս նախորդ դարի սկզբին Ն. Ադոնցը<sup>14</sup>, իսկ 40-ական թուականներին Գր. Ղափանցեանը հէնց այսպիսի տարանջատում են կատարել՝ ուրարտական, նայիրեան, խեթական, խալդական եւ կովկասեան ցեղերից մեզ անցած տոհմանուն տեղանունների վերլուծութեան ժամանակ՝ առանձնացնելով դրանց նախահայկական սկզբնաձեւերը կիրառութեամբ հայկական ձեւերից. ձուլող ժողովուրդը իւրացնում է բնիկների լեզուների բառապաշարը, նրա լեզուում առաջանում են նոր հնչիւնական,

12 Նոյն տեղում, էջ 15:  
13 Նոյն տեղում, էջ 17:  
14 Ն. Ադոնց, ԱԶ. աշխ., էջ 413-549:

11 P. A. Ageeva, Проблемы топонимического субстрата, - «Этническая топонимика», Москва, 1987, էջ 14:

ձեւաբանական, բառակազմական եւ այլ օրինաչափութիւններ, որոնք յետագայում բնորոշուում են որպէս ենթաշերտային: Ուշագրաւ է այս առումով Մոփք տեղանունան ստուգաբանութիւնը: Ն. Ադոնցը նշում է, որ Մոփք-ը նոյն նախաձայնական Supani-ն է, որը հայերէնին անցել է  $S > \text{Մ}$  հնչիւնական անցումով, իսկ մեր ք-ն բնիկների լեզուի յոգնակերտն է, այսինքն՝ ունենք ենթաշերտային փոխառեալ արմատ+ձայնական յոգնակերտ ձեւոյթ կառոյցը. «Supani անուանումը հարազատօրէն պահպանուել է ասորական Sofan-aje ձեւի մէջ՝ հաւանաբար հնաբնականների հետ ասորիների աւելի մօտիկ ազգակցութիւն ունենալու հետեւանքով: Հայկական եւ ասորական ձեւերը իրապէս, այսինքն՝ աշխարհագրական առումով համընկնում են եւ նշանակում միեւնոյն երկիրը, որ բնակեցւած էր գերազանցապէս հայ եւ ասորի ծագում ունեցող ժողովուրդներով»<sup>15</sup>:

Տարբեր ազգերի ժողովուրդների փորձը ցոյց է տալիս, որ աշխարհագրական անունների իւրացումը բնիկների լեզուից առաւել արագ եւ ուղղակի է կատարուում, յաճախ այն կարող է լինել համատարած: Նշենք, որ Պատմական Հայաստանի տարածքի որոշ տեղանուններ առայսօր ծագումով հայկական չեն դիտարկուում, կամ դրանց հայերէնով ստուգաբանութեան փորձերը համարուում են առասպելական, օրինակ՝ Գեղամայ ծովակ/ծով, Գեղամայ լեռնաւ, ինչպէս նաեւ Գեղարքունիք տեղանունները, որոնք հայկական ժողովրդական աւանդութիւնը քերթողահայր խորենացու փոխանցմամբ կապում է Գեղամ նահապետի անուան հետ, Գր. Ղափանցեանը, Ն. Ադոնցը յետագայում նաեւ Վ. Զիհանեանը բացատրում են vel ցեղանունան միջոցով, որը Կուրի եւ Արաքսի շրջաններում ապրած ցեղ էր, իսկ այդ ցեղանունան բառային իմաստը ենթադրաբար

15 Ն. Ադոնց, Գ2. աշխ., էջ 52:

բխեցուում է ուրարտերէն ueli «աշխարհագոր, շոկատ» բառերից<sup>16</sup>: Մագումնաբանօրէն այս տեղանունը ծագումով ուրարտական է, կիրառութեամբ՝ բացարձակ հայկական: Երասխ/Արաքս գետանունը եւս շատ հայ եւ օտարազգի պատմաբաններ եւ լեզուաբաններ՝ Մ. Նիկոլսկի, Ս. Երեմեան, Հ. Կարապետեան, փորձում են բխեցնել ուրարտական երկրանունից՝ Eria i, աւելի ստոյգ՝ այս բառի յոգնակի հայցական հոլովածեւից, որը սկիւթական ցեղանունից է առաջացել: Խորենացին մեզ համար մայր դարձած այս գետանունան ծագումը կապում է Արամայիսի թոռան՝ Երաստի հետ: Ինչպիսին էլ լինի այս գետանունան ծագումը՝ կիրառութեամբ այն հայկական է<sup>17</sup>:

Առկայ է նաեւ հակառակ երեւոյթը, երբ ծագումով հայկական տեղանունը, կիրառութեամբ դարձել է ուրարտական: Այսպէս՝ Գ. Զահուկեանն իր «Հայոց լեզուի պատմութիւն. նախադրային շրջան» արժեքաւոր աշխատութեան մէջ, քննարկելով հայերէնի լեզուական տարրը ուրարտական տեղանուններում, հետեւեալ զգուշաւոր զուգահեռներն է անցկացնում. «Սարգուրիի արձանագրութեան մէջ յիշատակուած Մալաթիա քաղաքի մերձակայքում գտնուած Karniši «լեռնային երկիրը», հնարաւոր է, որ այս անուան մէջ առկայ լինի հայկական քար (յոգն. ուղղ. քարիք, հայց. քարիք) բառը, նոյնիսկ սրա յոգն. հայց. նախնական ձեւը... Եթէ գիտ (գեղ-)\*-ի յետուրարտեան շրջանի ձեւափոխութիւն չէ (հմմտ. Uelikuni > Գեղա(ր)քունի) եւ ուրարտական շրջանում որոշ տարածքներում արդէն արտասանուել է հէնց ց-ով, ապա թերեւս նրա յոգնակի ձեւն է պահպանուած Giluarani-ի մէջ, որ Գ. Մելիքիշ-

16 Տե՛ս Վ. Գ. Զիհանեան, Հայկական լեռնաշխարհի ջրանուանները, Հայոց լեզուի պատմութեան հարցեր, 3, Եր., էջ 239. Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ.1, Եր. 1986, էջ 827:

17 Վ. Գ. Զիհանեան, Գ2. աշխ., էջ 242:

ուրիլին ... համարում է «ինչ-որ տոհմացեղային անուանում»: Ինչպէս յայտնի է, գիտ-ը հանդիպում է գիւղեան, գեղենի, գեղաւրայ-ք (գեղաւրէք) յոգնակի-հաւաքական ձեւերով եւ Giluarani-ի մէջ կարելի է տեսնել ինչ-որ հաւաքական ձեւ»<sup>18</sup>:

Այս տեղանունան վերաբերեալ Ղափանցեանի ստուգաբանութիւնը հետեւեալն է. նա Գեղարքունիք-ը բխեցնում է Velikuni (Velikuxi) սկզբնաձեւից, նշում է, որ այս անունը համընկել է ժամանակակից Նոր Բայազետի հետ: Սարգուրի Բ.-ի տարեգրութիւններում հինգ անգամ յիշատակուում է այս երկիրը. «Ես արշաւեցի Վելիկունի երկիր... մեղայականօք ինձ մօտ եկաւ Նիդին՝ Վելիկունի երկրի արքան, ցածրացաւ, ես հնազանդեցրի նրան եւ հարկատու դարձրի»:

Վելիկունի կամ Վելիկունի անունը կայ նաեւ Ռուսա Ա. արքայի թողած արձանագրութիւններում՝ պահպանուած Սեւանայ լճի հարաւային ափին: Հայերէնում նախապատուութիւնը տրուում է -նի վերջածանցով խալդական ծագում ունեցող Վելիկունի ձեւին, որն էլ պահպանուել է Գեղարքունի բառում: Ղափանցեանի ստուգաբանութեամբ՝ Վելիկ բառը՝ որպէս այդ շրջանի ցեղի տոհմական անուն, նշանակում է «վել» ցեղի սերնդից: «Վել» ցեղային անունը, ըստ խալդական լեզուի, նշանակել է «ժողովուրդ»: Ղափանցեանը կարծում էր, որ առհասարակ բոլոր ազգերի անունների առաջնային նշանակութիւնը եղել է «մարդիկ, ժողովուրդ»<sup>19</sup>:

Ուշագրաւ է նաեւ Երեւան տեղանունան բխեցումը էրիա-Eria ցեղանունից, որը բազմիցս յիշատակուած է ուրարտական թագաւորների արձանագրութիւններում: Այս ցեղանունը ի սկզբանէ եղել է

18 Տե՛ս Գ. Զահուկեան, Գ2. աշխ., էջ 444-445:  
19 Гр. Капанян, Историко-лингвистическое значение топонимики Древней Армении, Ереван, 1940, էջ 20-23:

նաեւ այրական անուն, աւելի ճշգրիտ՝ դիւցազնանուն (էպոնիմ): Երեւան անուան համար Ղափանցեանն առաջարկում է ենթադրուող հետեւեալ փոխակերպումների հնարաւոր շղթան՝ eri(a)+awan, այսինքն՝ «էրիա երկիր», «էրիա վայր», ապա հայերէնին բնորոշ հնչիւնական անցումով, երկբարբառների պարզեցմամբ դարձել է ia>ea>e, որից ուշ շրջանում առաջացել է Երեւան ձեւը: Յիշեալ ծագումնաբանութեան կողմնակիցներն էին նաեւ Նիկոլսկին եւ Սանդալջեանը<sup>20</sup>: Այս վարկածի դէպքում դարձեալ գործում է դիւցազնանուն>ժողովրդանուն>տեղանուն անուանադրման բանաձեւը: Մագումով ոչ հայկական կամ նախահայկական տեղանունահիմքը կիրառութեամբ աստիճանաբար դառնում է զուտ հայկական:

Աւելի առաջ անցնելով Ղափանցեանը էրիա/Արիա դիրքային տարբերակների համարժէքութիւնն է տեսնում, որովհետեւ e>a անցումը հայերէնում սովորական է եղել բոլոր ժամանակներում (Երիգա/Արիգա, Երասխ/Արաքս, Երաստ/Արաստ)՝ ըստ այդմ փաստարկելով մեր տարածքում արիական ցեղերի հնաբնակ լինելը: Նա կիրառում է հայկականացուած իրանական ցեղեր արտայայտութիւնը<sup>21</sup> խօսքը հիմնաւորելով մեր նախարարական եւ թագաւորական շատ տոհմերի իրանական ծագմամբ:

Եթէ ժողովուրդների շփումները եւ յարաբերութիւնները դիտարկենք զուտ լեզուաբանական հայեցակէտից, ապա պէտք է նշել, որ տարածաշրջանային շփումների ժամանակ յաղթող լեզուն սովորաբար փոխառում է ոչ միայն տեղանուններ, այլ նուաճուող լեզուի ընդհանուր կամ ապելլատիւ բառապաշարի միւլտիպլետներ<sup>22</sup>: Ուստի,

20 Նոյն տեղում, էջ 7-8:  
21 Նոյն տեղում, էջ 9:  
22 Լեզուաբանական գրականութեան մէջ առկայ է ապելլատիւ (լատիներէն քերականական տեր-

որպէս կանոն, ենթադրուում է, որ եթէ տուեալ լեզուում կայ տեղանունական սուբստրատ, ապա պէտք է լինի նաեւ ընդհանուր ապելլատիւ սուբստրատ՝ հնչիւնական, ձեւաբանական, շարահիւսական որոշակի դժեր, որոնք կարող են բացատրուել ձուլուած լեզուների ենթաշերտային ազդեցութեամբ: Ներկայիս տեղանունագիտութեան մէջ, սակայն, միտում կայ տեղանունական սուբստրատը դիտարկել որպէս յարաբերական բարձր անկախութեան միաւոր, որն ուղղակի չի կապուում ընդհանուր լեզուական սուբստրատի հետ. այս տարբերակումը կատարում են՝ ելնելով տեղանունների եւ բառապաշարի այլ միաւորների, հասարակ բառերի՝ հաղորդակցման ընթացքում ունեցած տարբեր գործառնութիւններից<sup>23</sup>: Տեղանուններն առաւել կապուած են տարածքին, որովհետեւ տարածքային կողմնորոշման եւ նկարագրութեան համար ստեղծուած նշաններ են: Նրանք ինչ-որ առումով տուեալ տարածքի բաղկացուցիչ մասն են դառնում, եւ տարածութեան ու ժամանակի մէջ կարծես սահմանափակուած միաւորներ են: Լեզուի ոչ յատկանունագիտական բառաշերտն առաւել շարժունակ է, վերժամանակային եւ վերտարածքային, նրանք ծառայում են լեզուակիր առաւել մեծ հանրոյթների, ուստի հեշտութեամբ փոխազդեցութեան մէջ են մտնում, արդիականանում առաւել մեծ արագութեամբ,

իսկ տեղանունները պահպանողական են իրենց բնոյթով, հետեւաբար՝ աւելի արխայիկ: Կարծում ենք՝ հետաքրքիր արդիւնքների կարելի է հասնել տեղանունական սուբստրատի յարաբերականօրէն ճշտուած միաւորների վերաբերմամբ կիրառելով Մ. Սուտոբեշի բառափիճակագրական մեթոդը՝ տարժամանակաւորումը, որը հայ լեզուաբանութեան մէջ կիրառել է Գ. Զահուկեանը՝ վերականգնելով հայերէնի նախագրային շրջանները, նրա տարիքը<sup>24</sup>: Մ. Սուտոբեշը տարբեր լեզուների հիմնական բառաֆոնդից առանձնացնում էր որոշակի քանակի բառեր (վերջում 100 բառ) եւ պարզում, թէ 1000 տարուայ ընթացքում քանի միաւոր է դուրս մղուում, քանիսը պահպանուում: Վիճակագրութեան ընդհանուր պատկերը հետեւեալն էր. ընտրանքի 15%-ը դուրս է մղուում, 85%-ը՝ պահպանուում: Ըստ հիմնական բառաֆոնդի պահպանութեան էլ որոշուում է այս կամ այն լեզուի տարիքը, միասնութիւնից անջատելու ժամանակը: Զուտ տեղանունագիտական ենթաշերտի նմանատիպ գնահատման փորձը կարող է հետաքրքիր մանրամասներ բացայայտել տարիքի եւ միջլեզուական միասնութեան ժամանակների վերաբերեալ: Շեշտենք նաեւ այն հանգամանքը, որ շատ տեղանունագիտների կարծիքով՝ նուաճուած կամ ձուլուած ժողովուրդների լեզուների տարբեր կարող են սահմանափակուել զուտ տեղանուններով եւ մուտք չգործել նուաճող, կամ միաձուլող լեզուի ընդհանուր բառապաշար<sup>25</sup>: Այս առումով տեղանուններում վերականգնուող ժողովրդանուններն ու տոհմանուններն առաւել մեծ արժէք են ստանում, որովհետեւ բացայայտում են առանձին լեզուների կազմաւորման եւ էթնիկ փոխներ-

միմ nomen appellativum) և оѣиѣиѣ (оѣиѣиѣ յատուկ անուն) բառապաշարներ հակադրութիւնը. ապելլատի կամ հասարակ անունների բառապաշարի մէջ ներառում են խօսքի բոլոր մասերը՝ գոյական, ածական, թուական, բայ, մակբայ կապ, շաղկապ, ձայնարկութիւններ, առկայութեան դէպքում նաեւ նրանց քերականական յարաբերութիւնները, այսինքն՝ ապելլատի բառապաշարն առաւել լայն ընթացում է լեզուի բառային միատրների. բառային համակարգ՝ գումարած քերականական թեքում:

23 А. В. Супеанская. Ономастический континуум.- «Тюркская ономастика», Алма-Ата, 1984, էջ 5-12:

24 Տե՛ս Գ. Բ. Զահուկեան, Աշ. աշխ., էջ 15-17:  
25 Տե՛ս А. Ф. Роголев. К вопросу о методике историко-лингвистического анализа этнопонимов.- «Этническая топонимика», Москва, 1987, էջ 29-33:

թափանցումների շատ աւելի վաղնջական շերտեր, քան մնացեալ բառային միաւորները: Բացի դրանից, տեղանունները՝ յատկապէս ժողովրդանուններից բաղադրուած, կազմում են, Ա. Սուպերանսկայայի բնորոշմամբ, «օնոմաստիկ կոնտինիումը»՝ յատկանունական ընդհանրոյթը, այսինքն՝ տեղանունները միաւորում են ժամանակներն ու ազգերին՝ վերականգնելով լեզուների գոյութեան հինաւուրց շրջանը՝ հնդեւրոպական միասնութիւնից էլ աւելի վաղ ըն-

կած, ուրուագծում են տարբեր լեզուաընտանիքներին պատկանող լեզուների ենթադրեալ ընդհանրութիւնը: Եթէ խնդիրը մասնաւորեցնում ենք Հայկական բարձրավանդակի տարածքում, ապա ժողովրդանուններ պարունակող տեղանունների հիման վրայ հնարաւոր է վերստեղծել բազմաթիւ ժողովուրդների ու տոհմերի յարաբերութիւնների այն համայնապատկերը, որ գոյութիւն է ունեցել Քրիստոսի ծննդից 5-6 հազարամեակ առաջ: